

Բ. Գ Ո Ր Ւ Ն

ՅԿՊՀ (092.ԶԵՐԺԻՑԱԿԻ)

ԱՏՈՒԹՎԱՆ Է 1961 թ.

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՄՊԵՏԸ

ՀԵՂԱ

Թարգմ. Վ. Միմոյելյան



Թ Ե Տ Հ Ր Ա Տ

ՀԼԿՁԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱԿԱՌԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ

1938

Գատ. լսմբազիր՝ Ա. Արմենյան
Լեզվական խմբագիր՝ Հ. Հարությունյան
Տեխ. խմբագիր՝ Ան. Քառագարյան
Մրբագրիչ Ա. Արզաքանյան

A II
7525

Գրավվեած լիազոր՝ Դ.—3580. Հրատ. № 4484.

Պատվեր 192. Տիրաժ 4000.

Թուղթ 62×94. Տպագր. 4/5 մամ.

Մեկ մամ. 38 400 նշան. Հեղինակ. 2/5 մամ.

Հանձնված և արտադրության 15 փետրվարի, 1938 թ.

Ստորագրված և տպագրության համար 28 մարտի, 1938 թ.

Գինը 35 կ.

**Յերեխաներ, մենք ուղում ենք պատմել ձեզ աննկուն
կամքի և բոլշևիկան մեծ կրքի տեր մի մարդու մասին։
Նրա անշեղ և նպատակասլաց կյանքը տարիներ շարունակ
փարոսի պես լուս ե տալու նոր սերունդներին։**

Նրա անունը միշտ ել կմնավորպես ազնվության, ան-
կաշառության և ճշմարտության սիմվոլ։ Կուսակցության
հավատարիմ վորդու պայծառ գենքը միշտ ել հպարտու-
թյան գգացմունք կառաջացնի սոցիալիզմի բարեկամների
մեջ։

Մենք խոսում ենք Զերժինսկու մասին։

Նա ծնվել է Լիտվայում, 1877 թվականի սեպտեմբերի
11-ին. 1937 թվի սեպտեմբերի 11-ին լրացավ նրա ծննդ-
յան 60 տարին։

Զերժինսկու վողջ կյանքը, մինչև հեղափոխությունը,
յեղել ե բանտի խցիկների, աքսորների, փախուստների,
արտասահմանյան թափառությունների և համառ պայքարի մի
անընդհատ շղթա։ Իր կյանքի գրեթե մի քառորդը նա
անց ե կացրել բանտերում և աքսորավայրերում։

Դեռ աշակերտական նստարանից, 1894 թվականին
(Զերժինսկին ալր ժամանակ սովորում եր Վիլնո քաղաքի
գիմնազիայում) Ֆիլիքսը մտնում ե սոցիալ-դեմոկրա-
տական խմբակի մեջ։ Այստեղ նա առաջին անգամ ծանո-
թանում ե Մարքսի հեղափոխական ուսմունքին։ Մի տարի
անց արդեն նա ինքն ե տարածում այդ ուսմունքը Վիլ-
նովի գործարանային խմբակներում։

Նա՝ ծայրից — ծայր շըջել ե վողջ Լեհաստանն ու Լիտավան։ Կովնոյի բանվորները նրան ճանաչում ելին վորովես տաղանդավոր ազիտատոր։ Նրան տեսել են իրենց շարքում Դոմբրովոյի գործադուլավոր հանքափորները։

1. ԲԱՆՏԵՐՈՒՄ ՅԵՎ Ա.ՔՍՈԲՐՈՒՄ

Առաջին ձերբակալութիւնը։ Ֆելիքսին յերեք տարով աքսորում են Նոլինսկ, Վյատկայի խուլ անապաները։ Բայց Ֆելիքսն այստեղ ել չի հանգստանում և սկսում է պրոպագանդ ծղել բանվորների մեջ։ Յեվ ահա մի նոր գատավճիռ։ «Ըմբռուտ բնապորության և վոստիկանութիւնն հետ կոփվ սարքելու համար» աքսորել 500 վերաս ավելի հյուսիս՝ Կայցորոդսկոյե գյուղը։

Բայց Զերժինսկին լերկար չի մնում աքսորում։ Նա փախուստի ծրագիր և մշակում և այն իրագործելու միջոցը գտնում։ Ֆելիքսը մի վտանգավոր ճանապարհորդութիւնն ձեռնարկելով՝ ձկնորսական նավակով փախչում և գեղի կանա գետի ակունքները։ Զերժինսկին շաապում և վիլնոս Ալդ 1899 թվականին եր։

Մի քանի ամիս հետո Ֆելիքսը նորից ընկալ վոստիկանության ձեռքը։ Յեվ նորից սկսվեցին թափառումները բանտից — բանտ։ Զերժինսկուն նատեցրին վարշավակի մոռալ միջնաբերդի 10-րդ պավելիոնը, վորտեղից նրան տեղափոխեցին Սեղլիցկի բանտը։

Չափազանց փոքր լերկնքի մի կտոր ել միայն լերեսում բանտի լուսամուտից, խիստ ամուր ելին բանտի խցի ճաղերը և գարշահոտ եր այնտեղի սովը։ Բայց Ֆելիքսը չի վհատվում։ Նա լերազում և պայքարի մասին։

Դեռ իր առաջին աքսորավալրից՝ Նոլինսկից, Ֆելիքսը գրում ե իր քրոջը։

«Կանք կարող ե ինձ միայն վոչնչացնել, ճիշտ այնպես, ինչպես մըրիկը տապալում և դարավոր կաղնին, բայց ինձ լերբեք չի փոխի...»

Իմ պայմանի սահմանագիծը կարող է լինել միայն զերեզմանը»:

1902 թվականն ե... Զերժինսկուն դատապարտում են աքսորիք: Յերկար ու դժվարին ե կայանից կայան գեղի Արևելյան Սիբիր ձգվող ճանապարհ՝ սկսած մի առաջման բանտից մինչև ժողովը: Ահա այդ բանտերից մեկը, զորի մասին լերգում ելին.

Նեռափոր Խրկուտսկի յերկրում,

Զոյզ խոռոր ժայռերի միջին;

Վիրխարի պարսպով պատած

Ամրոցն է Սլեմանդրյան կանգնած:

Այդ բանտի հոկիչներն իրենց դաժանությամբ հարուսի ելին ամբողջ Ռուսաստանում: Զերժինսկին իր ընկերների հետ վորոշեց բանտում բունա կազմակերպել: Դա մի խիզախ վորոշում եր: Կալանավորները «Տարագիրների հանրապետություն» կազմակերպելով հրաժարվեցին յենթարկվել իշխանությանը: Բանտի տանիքին բարձրացրին մի կարմիր գրոշ, վորի վրա զրված եր «Ազատություն»:

Յեզ կալանավորները Զերժինսկու ղեկավարությամբ հաղթանակ տարան: Բանտալին կյանքի պայմանները բարելավվեցին:

Ալեքսանդրյան ամրոցից Զերժինսկուն ուղարկեցին մի խոռու վար՝ Վիլլուտսկի: Այնուեղ նա պիտի հինգ տարի մնար, վորպես աքսորական: Բայց ժանդարմներին չհաջողվեց Զերժինսկուն նույնիսկ մինչև Վիլլուտսկ հասցնել: Յերր Լենա ղետով առաջ ելին ընթանում, Յելիքսը փախչելու մի ծրագիր գծեց և ոգտվելով զիշերվա խավարից՝ նավակով փախավ դեռ Վարչովկենսկից: Յեզ ալսպես տարեց-տարի ձերբակալություն, բանտ, աքսոր, փախուստ, նորից ձերբակալություն, նորից բանտ, նորից փախուստ: 1909 թվականին Վարչավալի բանտում նստած՝ նա զրում եր իր որագրում.

«Բանտում հասունացա յես, տանջանքների ու մենու-
թյան մեջ, կյանքի ու աշխարհի կարոտով... Այժմ յես
հպարտ եմ: Տեսնում եմ այս անհամար մասսաները, վորոնք
արդեն ալեկոծվել են, փորել են հին կարգերի հիմքերը
և այդ մասսաների ներսում պատրասվում են նոր ուժեր՝ նոր
մարտերի համար: Յես հպարտ եմ, փոր նրանց հետ եմ,
փոր տեսնում եմ նրանց, զգում ու նասկանում եմ նրանց,
յեզ փոր անձամբ շատ եմ տառապել նրանց հետ...»:

1912 թվականին Թելիքսին նորից դատապարտեցին
9 տարվա տաժանակիր աշխատանքի: Բանտի ցուրտ
խուցերը մաշում ելին նրա որդանիզմը: Բայց Թելիքսի
սիրան առաջվա պես լերիտասարդ եր:

Չերժինսկուն բանտից ազատեց միայն 1917 թվականի
փետրվարյան հեղափոխությունը: Բանտից նա ուղիղ գնում
և Մոսկվայի Կուսակցության կոմիտեն և աշխատանք
պահանջում: Կուսակցությունը նրան ուղարկում է Պետրո-
գրադ: Չերժինսկին ակտիվ կերպով մասնակցում է Հոկտեմ-
բերի մրերյան զինված ապստամբության նախապատ-
րաստմանը: Նա Մտալինի կողքին եւ Նրա հետ միասին
միևնույն շտաբումն եւ Ռազմահեղափոխական կոմիտեյում:

2. ԱՌԱՋԻՆ ԶԵԿԻՍՏԸ

Իշխանությունն անցավ Խորհուրդներին։ Բայց հեղափոխության թշնամիները՝ սենյակիկները, եսերները և այլ հականեղափոխականներն աշխատելով ոտար պետությունների հետախուզությունների առաջադրանքով՝ ապատամբություններ ենին պատրաստում, գավադրություններ լարում։

Պետք եր պաշտպանել հեղափոխության նվաճումները։ Պետք եր մի որդան, վոր անողոք դատաստան տեսներ բոլոր հականեղափոխականների ու սարոտաժ անողների հետ։ Յեվ ստեղծվեց այդ որդանը։ Լենինն իր սեփական ձեռքով գրում ե արձանագրության մեջ. «Հանձնածողովն անվանել Ժողովրդական Կոմիտեների խորհրդին կից Համառուսական Արտակարգ Հանձնաժողով՝ նականեղափոխուրյան ու սարոտաժի դեմ պայքարելու նամար և նաստանել այն»։ Յեվ նրա ղեկավարությունը հանձնում է Զերժինսկուն։ Արոգես ծնվեց առասպելական Վեչեկան—հեղափոխության ահարկու սուրը։ Քանի խորամանկ, նենդ ու ճարպիկ թշնամիներ ե վորսացել նա։ Քանի քանի վոճրապարտ հղացումներ ե բաց արել Ֆելիքսի անողոք ձեռքը։

Ընկեր Ստալինը Ֆելիքսին անվանել ե «բուրժուազիայի սարսափ»։ Զերժինսկին ալրվում եր աշխատանքում։ Նա անխոնջ եր։ Գիշեր ցերեկ շարունակ աշխատում եր սքանչելի հոգու տեր այդ մարդը՝ կազմակեր-

1) ВЧК—Всероссийская Чрезвычайная Комиссия—Համառուսական Արտակարգ Հանձնաժողով։

պելով Վեչեկայի աշխատանքը և մերկացնելով թշնամիների մեքենայությունները։ Մնալում եր նա հենց այնուեղ, իր աշխատանքային կարինետում, աղած ձկով, խաշած կարտոֆիլով և ալնտեղ եւ, շիրմայի հետեւ հանգստանում եր չոր թախտի վրա։ Բայց աբունք դա հանդիսաւ եր։ Եարունակ մարդիկ ելին դալիս, զանգահարում ելին հեռախոսները։

Զերժինսկին 1919 թվականին գրում եր.

«Յես գՏնվում եմ պայքարի հենց կրակի մեջ։ Հանգիս չունեցող զինվորի կյանք է դա։ Վորովինեևի պետք է փրկել վառվող տանք։ Ժամանակ չկա մերոնց յեվ իմ մասին մտածելու։ Աշխատանքն ու պայքարը դժոխային են»։

Պետրոգրադում սպանված և Ռուբիցին։ Թշնամիներն անցան տեսորի։ Յեվ Զերժինսկին գնում և Պետրոգրադ։

Մնածամբ հարցաքննում տեսորիստներին։ Բայց մի նոր կրակոց տեղի ունեցավ Մոսկվայում։ Եսերուհի Կապրանի թունավորված գնդակը խոցեց լենինին։ Յեվ Յելիքսն արդեն շտապում և Մոսկվա։ Գնացքները լիփ—լիցուն են, բայց դա չի շփոթեցնում Նրան։ Նա մեկնում է տիֆոզային ջերմավագունի (տեպլաշկա) թափարգելի (բուֆեր) վրա կանդնած…

Կոլչակը ճեղքել եւ ճակատն Ռուբալում։ Պերմը հանձընված է։ Զերժինսկին Ստալինի հետ միասին արեելլան ճակատն և մեկնում հետաքննելու Պերմի անկման պատճառները։ Նրանք պարզում են, զոր ճակատը ճեղքվելու հանցավորը Սրբիկա Տրոցկին է։ Ստալինն ու Զերժինսկին փրկում են գրությունը։

Կուսակցությունը Զերժինսկուն ուղարկում եր ամենապատասխանատու ճակատամասերը։ Կուսակցությունը Զերժինսկուն եւ հանձնարարում բարձրացնել արանսպորտը։ Նա լիռանգով կալչում է և այս գործին, նաև Վեչեկայի

նախագահն եւ և միաժամանակ Հաղորդակցության ձանապարհների ժողկոմը:

Յերբ լերկըում շատ անապաստաններ կալին՝ Զերծինսկիին լավագույն չեկիստական ուժերին ուղարկում և անապաստանության դեմ պարզաբերու։ Նրա նախաձեռնությամբ ստեղծվեցին անապաստաններից կազմված առաջին աշխատանքային կոմունաներ։ Նա ջերմորեն հոդ երտանում ձանուկների մասին։

Պետք եր վերականգնել պատերազմի արթիններին քայլագված արդյունաբերությունը։ Ո՞վ եւ դիմավորելու, իհարկե Զերժինսկին կուսակցությունը Զերժինսկուն և հանձնում ժողովրդական տնտեսության Գերազուն Խորհրդի զեկավարությունը։ Նա իր ուսերին եւ վերցնում մի նոր վիթխարի բեռ։ Միենայն ժամանակ Զերժինսկին շարունակում եւ զեկավարել չեկիստներին։ Նա առաջվապես լեռանդով պարզաբում եւ կուսակցության բոլոր թշնամիների՝ տրոցկիստների և զինովյեվականների՝ հեղափոխության գավաճանների դեմ։

Յ. ԹՇՆԱՄԻՆԵՐԻ ԴԵՄ ՄՂԱԾ ԿՈՎՈՒՄ

1926 թվականի հուլիսի 20-ն եւ Տեղի լեռ ունենուած կուսակցության կենտրոնական կոմիտեի պլենումը։ Տրոցկիստներն ու զինովյականները ճգնում են հարձակվել կենտկոմի վրա։

Ալդ ժամանակ տրոցկիստական—զինովյական վոհակի դեմ մի ցասութմալից ճառով հանդես ե զալիս Զերժինսկին։ Նա մեղադրում ե նրանց հեղափոխության շահերին դավաճանելու մեջ։ Նրա խոսքերը հնչում են պողպատի նման։

Արլունը լեռում ե նրա ջերմ սրտում։ Ֆելիքսն արդ սրիկաների հասցեցին շպրտում ե.

—... Դուք պոլիտիկանությամբ եք զբաղվում, և վոչ թե՝ աշխատանքով։ Իսկ դուք լավ գիտեք, թե ինչումն ե ի՞ն ուժը։ Յես ինձ լերբեք չեմ խնալում։ Յես լերբեք չեմ կեղծել։

Տրիբունից նա հեռացավ գրգռված և ձեռքը ջղաձգորեն սրտին տանելով։ Մի քանի ժամ հետո Ֆելիքսի բոցավառ ու կըքոտ սիրաը պալթեց։ Զերժինսկին մեռավ, ինչպես զինվորը կուլում։

Ստալինն այդ որերին Ֆելիքսի մասին ասել ե.
«...Ուզում ես մեկ խօսքով բնորոշել այդ յեռուն կյանքը— այրում։ Այրում յեվ հերոսական խիզախություն՝ դժվարությունների դեմ մրած կուլում։»

Ալսպես եր Զերժինսկին։ Նա մի համարձակ ու խիզախ մարդ եր։ Նրան անվանում երին յերկաթլա Ֆելիքս, հեղափոխության ասպետ։ Նա անհաշտ եր թշնամու նկատմամբ, արհամարհում եր յերկչոտներին և ատում եր սրիկաներին։ Նա յերբեք չեր վախենում մահից։ Մի անգամ քաղաքացիական պատերազմի տարիներին ալսպիսի գեպք պատահեց։ Դավաճան Պոպովի զորամասը ձերբակալեց Զերժինսկուն։ Ֆելիքսն առանց ցնցվելու բռնեց թշնամու կըծքից և դոչեց։

— Սրիկա, այս ըռպելին տուր ինձ իմ ատրճանակը, վորպեսզի կարողանամ արձակել ձեր ճակատին։ Դուք վախկոտ եք։ Հեռացեք այստեղից…

Թշնամիները չհամարձակվեցին ձեռք տալ ֆելիքսին։ Նա ջերմորեն հավատում եր հաղթանակին և նվիրված եր կոմունիզմի գործին։ Դեռ սկ ռեակցիալի տարիներին, բանտի իր որագրերից մեկում ֆելիքսը դրում եր։

«...յերե սոցիալիզմի աւտոր, ապագայի աստոր իսկապես չլուսավորե՛ մարդկությանը՝ չարժե՛ ապրել»։

Զերժինսկին յերկրի առաջին չեկիստն եր, Լենինի ու Ստալինի հավատարիմ զինակիցը։ Նա միշտ անհաշտ պալքար եր մզում հեղափոխության բոլոր թշնամիների դեմ, կուսակցության թշնամիների դեմ, անողոք կերպով մերկացնում եր տրոցկիստներին, զինովեվականներին և այլ հականեղափոխականներին։ Նրա ղեկավարության ներքու Վեցեկա-Ազեպեուն հեղափոխության ահարկու սուրն եր։ Դավաճան Յագոդան փորձեց բթացնել այդ զենքը։ Այժմ ֆելիքս Զերժինսկու վառավոր տրագիցիաները վերականգնված են Նդժե-լ որդանններում, վորոնք ղեկավարվում են Ստալինյան ժողկուն Ն. Ի. Յեժովի կողմից։

* * *

Հզոր շոգեքարշերում, նոր քաղաքներում, վիթխարի
գործարաններում, մանկապարաններում, փառապահն
ներքործժողկոմատականների մեջ ապրում և Ֆելիքսի
անունը:

Յելի իրավացի լե բանաստեղծ Մալակովսկին, վոր
ասել ե.

— Այն պատաճուն,
վոր մտածում ե դասավորել
իր կյանքի,

— Ու վորում ե,
թե ում կյանքն ընդորինակի՝
կասեմ

առանց մտածելու յերկար՝
լնիեր

Զերժինսկուց
Ընդորինակիր.

Տ=/
1583

A



23

ԳԻՒԸ 35-րդը.

-044-

260

A

II

7523

Б. Г О Р И Н
РЫЦАРЬ РЕВОЛЮЦИИ
Гиз Арм. ССР, Ереван, 1938

Բ Բ օ օ օ օ